№757 С 1926 № 548

ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ԿԱԹՆԱՌԱՏ ԿՈՎ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

637.1
Ա-58

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1926

N757
Ц
Са2073
637.1
Ц-58
С1926/4548
24 SEP 2010

ԱՆԱՄՆԱԲՈՒԾԻ Բ. Լ. ՍԿՈՄՈՐՈԽՈՎ

ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ
ԿԱԹՆԱՌԱՏ ԿՈՎ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1926

31 JUL 2013
22.830

Напечатано в типографии Госиздата „Красный Пролетарий“: Москва, Пименовская ул., д. № 16, в количестве 4000 экз. Главлит № 54309.

S6159 - 66

ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ԿԱԹՆԱՌԱՏ ԿՈՎ

Կով գնելիս—կաթնառատ, լավ կով ընտրելը դժվար գործ է։ Ի՞նչ նշաններից կարելի է իմանալ՝ կաթնառա՞տ է կովը, թե՞ վոչ։ Քիչ փորձված գնողները սովորաբար հենց այդ բանը չեն իմանում։ Դրանից ոգտվում են ծախողները և ամեն կերպ աշխատում առնողին խաբել։

Այդպիսի դեպքերում հաճախակի նրա ուշադրությունը դարձնում են կովի կաթնառատության այն նշանների վրա, վորոնք իսկապես նշանակություն չունեն։

Այս գրքույկում ամենաանհրաժեշտ խորհուրդներն ու ցուցմունքներն են բերված. ինչպես պետք է դիտել կովը և ընտրության ժամանակ ամենից շատ ինչ բանի վրա է հարկավոր ուշադրություն դարձնել։

Կով գնելիս ամենից առաջ անհրաժեշտ է. 1) վորոշել (հորթածնության թվով) կովի հասակը, 2) իմանալ, ի՞նչպես է նրա առողջությունը և 3) կարգի՞ն է ծիծը—արդյոք նա լիովին առո՞ղջ է, չկա՞ն նրա մեջ կոշտացած տեղեր կամ ուռուցքներ, արդյոք ծիծը և պտուկները արատ-

ներ և պակասություններ չունե՞ն։ Միայն դրանից հետո արդեն կարելի է այն նշանների վրա կանգ առնել, որոնցով ընդունված է իմանալ կովի կաթի առատությունը։

Հետո՝ կաթնառատ կով ընտրելիս աչքի առաջ պետք է ունենալ, որ կովերի կաթնառատությունը ժառանգական է լինում։ Այդ նշանակում է, որ եթե կովը կաթնառատ ծնողներից է, ապա կարելի է ավելի շուտ և անսխալ ընտրել իսկապես կաթնառատ կով։ Կաթնառատ կովերի ամբողջ ցեղեր և սերունդներ կան, որոնց կաթնառատությունը մի սերնդից մյուսին է անցնում։ Բայց միևնույն ժամանակ պետք է հիշել, որ կաթնառատ կովերի ցեղերի և լավ ծնողներից ծնած կովերի մեջ պատահում են այնպիսիները, որոնք քիչ կաթ են տալիս։ Յեվ ընդհակառակը, կարելի է շատ կաթնառատ կովերի պատահել մեր գյուղական նախիրների «անցեղ» կովերի մեջ։

ԻՆՉԻՑ Է ԿԱԽՎԱԾ ԿՈՎԻ ԿԱԹՆԱՌԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ամենագլխավորն այն է, որ կովի ծիծը բավականաչափ ուժեղ զարգացած պիտի լինի։ Ծիծը կաթի գործարանն է։ Կովի կաթնառատության վրա մեծ ազդեցություն ունի նույնպես նրա հասակը։ Շատ դեպքերում ստուգված է,

որ կովերի ամենաշատ կաթնառատությունը չորրորդ և վեցերորդ հորթածնության միջոցում է լինում—վեցից մինչև ութը տարեկան հասակում։ Այդ հասակից հետո կովերի կաթնառատությունը սովորաբար կամաց կամաց ընկնում է, պակասում է։

Տասնյերորդ հորթածնությունից հետո կաթի համար կով պահելը արդեն միշտ էլ ոգտավետ չի լինում։ Միայն առանձին դեպքեր են պատահում, երբ կովերը ութերորդ և մինչև անգամ տասներորդ հորթածնությունից հետո էլ շատ կաթ են տալիս։ Իսկ միջին թվով՝ տնտեսության մեջ կաթի համար կովը տաս տարի են պահում։

Բացի դրանից՝ կով ընտրելիս ուշադրություն պետք է դարձնել հորթածնության ժամանակի վրա։ Ինչպես հայտնի է, հորթածնության ժամանակը մեծ ազդեցություն է ունենում կաթի թե քանակության և թե հատկության վրա։ Հորթածնության առաջին ամիսները կովը այնքան էլ յուղալի կաթ չի տալիս։ Այդ կաթը իր քանակությամբ շատ կլինի, բայց իր բաղադրությամբ—ավելի ջրալի։ Առհասարակ նոր ծնած կովերի կաթը յուղ քիչ է պարունակում։ Հինգերորդ—վեցերորդ ամսից հետո կովը կամաց-կամաց կաթը պակսեցնում է։ Դրանից հետո կաթը ավելի թանձր և յուղալի է դառնում։

Կերակրելը նույնպես ազդեցություն է ունենում կովի կաթնառատության վրա։ Այդ հանգամանքը պետք չէ աչքից բաց թողնել։ Որինակի համար, յերբ կովը վատ տիրոջ մոտ է յեղել, ինչպես նրան կուշտ չեն կերակրել, կարող է լինել, որ հենց դրա պատճառով նա քիչ էր կաթ տալիս։ Վատ կերը, վատ, ցուրտ գոմը, վատ խնամելը և ընդհանրապես վատ պահելը միշտ վատ յեն ներգործում կովի կաթնառատության վրա։ Վատ կացության պայմանների մեջ յեղած կովը ժամանակի ընթացքում կարող է կաթը շատ ավելացնել՝ յեթե լավ կեր է ուտում, նրան լավ յեն պահում և խնամում։

Ավելի հանգիստ բնավորություն ունեցող կովերը, հեզ և խոնարհ կովերը միշտ ավելի լավ են քացի տվող անհանգիստ կովերից։ Այդպիսի կովերը ավելի լավ յեն կեր ուտում, ուրիշ բանով չեն զբաղվում։ Կթելու ժամանակ նրանք հանգիստ յեն և թողնում յեն, որ լիովին կթեն։ Այդ բոլորը նույնպես պետք է նկատի ունենալ կաթնառատ կով ընտրելիս։

ԻՆՉՊԵՍ ԻՄԱՆԱԼ ԿՈՎԻ ՀԱՍԱԿԸ

Կովի հասակն իմանալու ամենահասարակ միջոցը հորթածնության թիվն է։ Բանն այն է, որ ամեն մի հորթածնությունից հետո կովի պոզերի

վրա մի մի ողակ է դուրս գալիս։ Այդ ողակները գոյանում յեն այն պատճառով, որ կովը հղի ժամանակ թե՛ իրեն է կերակրում և թե՛ հորթին։ Դրա շնորհիվ անդի պակասություն է լինում և պոզերի վրա ողակների պես նշաններ են հայտնվում։

Կովի տարիքը հորթածության թվով հաշվելը շատ հեշտ է։ Դրա համար պոզերի ողակները պետք է համարել և ելի ավելացնել յերկու տարի—մինչև առաջին հորթածնության ժամանակը։ Յենթադրենք, որ ամեն մի պոզը չորս ողակ ունի։ Դրանց վրա ավելացնենք ելի յերկու տարի։ Հաշվենք. չորս ողակը չորս հորթածնություն է նշանակում, ավելացնենք ևս յերկու տարի, դուրս է գալիս վեց։ Ուրեմն՝ կովը վեց տարեկան է։ Պետք է ուշադրություն դարձնել և այդ ողակների միջև յեղած տարածության վրա։ Այդ տարածությունները հավասար պիտի լինեն։ Յեթե պատահի, որ նրանք իրարուց մոտավորապես յերկու անգամ մեծ յեն, ապա այդ նշանակում է, որ կովը անծընունդ է յեղել։ Ամեն մի այդպիսի մեծ տարածությունը յերկու տարի պետք է հաշվել։ Այդ մեծ տարածությունների թվի հիման վրա կարելի յե իմանալ, թե կովը քանի անգամ հղի չի յեղել։

Ի դեպ, պետք է նկատել և այն, որ պոզերի վրա ոդակները հայտնվում յեն վո՛չ միայն հղի լինելուց հետո։ Նրանք յերբեմն ծանր հիվանդություններից և սաստիկ քաղցած մնալուց հետո յել են հայտնվում։ Սակայն այդպիսի ոդակները դժվար չե հղիության ոդակներից զանազանել։ Նրանք քիչ ավելի պարզ կլինեն և անպատճառ անհարթ։ Գործնականում այդպիսի դեպքեր հազիվ յեն պատահում։ Ավելի շուտ շուտ այնպիսի դեպքերի յենք պատահում, յերբ պոզերի վրա ոդակները քի՛չ են նկատելի, որոշակի չեն արտահայտված։ Այդպես է լինում այն կովերինը, որոնք ծանրացած ժամանակ լավ յեն կերակրվել։ Այստեղ արդեն պետք է դիմել այն մարդկանց ոգնության, որոնք վարպետ են՝ կովի տարիքը նրա ատամներով որոշելու։ Անհրաժեշտ է լինում պոզեր չունեցող կովերի ատամները նայել, թե չե ուրիշ կերպ հնարավորություն չկա կովի տարիքն իմանալու։ Ամենից լավն է այդպիսի դեպքում անասնաբուժին դիմել՝ նրա խորհուրդն իմանալու և ոգնությունն ստանալու։

Ի՞ՆՉՊԵՍ ԻՄԱՆԱԼ՝ ԿՈՎԸ ԱՌՈՂՋ Է ԹԵ ՎՈՉ

Առողջ կովը արտաքուստ կայտառ կլինի, պարզ և աշխույժ հայացք կունենա, նրա բուրդը հարթ կլինի և մի քիչ ել փայլուն, պինչը

փոքր ինչ տաք և թաց։ Այդպիսի կովը կերի, լավ ուտելու և խմելու ցանկություն պիտի ունենա։

Շնչառությունը հավասար և հանգիստ պիտի լինի։ Յեվ ընդհակառակը, ամեն մի հազ, խըրխռոց, շնչարգելություն ապացույց են շնչառության գործարանների—շնչափողի և թոքերի—հիվանդությունների (հաճախ՝ թոքախտի)։

Փորլուծությունն ու փորակապությունը ապացույց են ստամոքսի կամ աղիքների հիվանդության։

Միզարգելությունը, արյունախառն շեռը ապացույց են միզերակի հիվանդության, այսինքն ցույց են տալիս, որ կովը յերիկամունքի, միզափամփուշտի ցավեր ունի, և այլն։

Պնչի չորությունը շատ հաճախ ջերմի կամ տաքության նշան է («ներքին տաքության»)։ Այդպիսի ջերմ և բարձր տաքություն միշտ լինում են փոքր ի շատե լուրջ ցավերի և վարակիչ հիվանդությունների դեպքում։ Յերբ հարկավոր է լինում կովի առողջությունը որոշել, այդ բոլորը պետք է նկատի ունենալ։

Կովի առողջությունը որոշելու ժամանակ ակսում են գլխից։ Պետք է նայել, արդյո՞ք գըլխին և մանավանդ ծնոտին ուռուցքներ չկա՞ն (Այդպիսի ուռուցքներ լինում են մի առանձին

հիվանդության ժամանակ, վոր ակտինոմիկոզ է կոչվում), արդյոք կովի աչքերը հո չե՞ն ցավում (կուրություն, փառ, աչքերի թաղանթի կարմրություն, արտասուքի հոսումն և այլն), արդյոք կովի քթից չի՞ հոսում, արդյոք բերանում վերք (վոր մի քանի վարակիչ հիվանդությունների ժամանակ լինում է, ինչպես, որինակի համար, «ժանտախտի», «կրծելու սովորության» ժամանակ և այլն), քերթված, բորբոքված տեղեր չկա՞ն։

Գլխից հետո պետք է նույնպես ուշադրությամբ դիտել վիզը, կրծքի վանդակը, վոտները, կճղակները, իսկ ամենից գլխավորն է—լավ դիտել ծիծը։

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԼԻՆԻ ԿԱԹՆԱՌԱՏ ԾԻԾԸ

Մենք արդեն ասացինք, վոր ծիծը կաթի գործարանն է։ Հենց ծծի մեջ է կաթը մշակվում և վոչ թե մի ուրիշ տեղում։ Այդ պատճառով կաթնառատ ծիծը միշտ իր «նշանները», իր առանձին հատկություններն ունի։

Կաթնառատ ծիծը անպատճառ մեծ և պարունակող պիտի լինի։ Նա կունենա լավ և զարգացած հավասարաչափ «ծծի քառորդներ»։ Այդ տեսակ ծիծը յետևից՝ ազդրների միջև, սովորաբար շատ առաջ է ընկնում։ Առջևից նա դեպի

փորն է գնում, նույնպես և կողքերից նա փոքր ինչ դուրս է ընկնում (նկար 1)։

Այդպիսի կաթնառատ ծիծը ընդհանրապես քառանկյունի ձև ունի։ Միևնույն ժամանակ նկատի պետք է ունենալ, վոր մեծ ծիծն էլ վոչ միշտ կաթնառատ կարող է դուրս գալ։

Այստեղ պետք է իմանալ կարնառատ ծիծը վոչ կաթնառատ ծծից զանազանել։ Յերկու դեպքումն էլ իրենց մեծությամբ նրանք միատեսակ կարող են լինել, սակայն ուշադրությամբ դիտելիս դժվար չի լինիլ զանազանությունը վորոշել։

Նկ. 1

Առողջ, կաթնառատ ծիծը, յերբ դեռ չեն կթել, շոշափելու ժամանակ բավական պինդ է, առաձկական, ասես թե լեցուն։ Յեվ ընդհակառակը, այդ ծիծը կթելուց հետո կակղում է, փոքր ինչ կախվում, դատարկ, արտաքուստ

եվ կնճռոտ է լինում։ Այդպիսի ծծի վրա ամեն անգամ կթելուց հետո յուրաքանչյուր փոքր, ծալքեր են լինում։

Ինչքան այդ ծալքերը մեծ են, այնքան եվ նա հեշտ է ձգվում։ Նշանակում է, որ ծիծն եվ լավ է։ Համենայն դեպս կաթնառատ ծծի համար դա լավ նշան է։

Նկ. 2

Իսկ փոչ կաթնառատ ծիծը կթելուց հետո քիչ է փոխվում, նա փոչ կախ է ընկնում, փոչ եվ կնճռոտվում։ Շոշափելիս նա պինդ և բավական ուժեղ կլինի։

Հետո կաթնառատ ծծի վրա լավ են փորոշվում կաթնային ջղերը (ավելի ճիշտ—«կաշվի» արյունատար կամ կաթնային յերակները)։ Կաթնառատ կովի ծիծը նուրբ, շարժուն և քնքուշ կաշի ունի՝ ցանցառ, կակուղ և փայլուն մազերով։

Փոչ-կաթնառատ ծծի կաթնային յերակները աննկատելի յեն լինում, սովորաբար նրա կաշին կոպիտ է լինում, և կթելուց հետո ծալքեր չեն լինում։ Այդ տեսակ ծծի մազերն եվ կոպիտ են լինում։

Կովի ծիծը յերբեմն եվ «կախ ընկած» է լինում։ Այդպիսի ծիծը ման գալիս լսլսում է կովի ազդրների միջև, մինչև անգամ յեթե կթած եվ չի։ Խորհուրդ չեն տալիս այդպիսի ծծեր ունեցող կով առնել։ (Տես. նկ. 2)։

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԼԻՆԵՆ ՊՏՈՒԿՆԵՐԸ

Կաթնառատ ծծի պտուկները վորքան կարելի յե միմյանցից հեռու պետք է լինեն և ուղղակի դեպի ցած պիտի նայեն։

Կթելու համար ամենից լավը այն պտուկներն են, վորոնք ծայրին նեղանում են, հարթ և միջին յերկայնության են։ Շատ յերկար պտուկները կամ մսային են լինում և դժվար են կըթվում, կամ կակուղ և նեղ, վոր պառավ կովերն են ունենում։

Կթելու ժամանակ կաթը հավասարաչափ պիտի հոսի պտուկներից, առանց վորևիցե դժվարության։

Յերբ թույլ կթվող կովերի ծիծը սաստիկ

լցվում է, շատ անգամ կաթը ինքնաբերաբար դուրս է թափվում։

Կաթնառատ կովերը, բացի կանոնավոր, բնականապես զարգացած չորս պտուկներից, ևս յերկու լրացուցիչ, քիչ զարգացած պտուկ են ունենում։ Սովորաբար այդ պտուկները յետին պտուկներից մի քիչ վեր են լինում։ Այդ պտուկները չեն կթվում, բայց կաթնառատության նշան են։

Լավ ծծի առջևի պտուկները յետքի պտուկներից շատ ավելի բարձր են։

Կարևոր նշանները կաթներակներն ու կաթնաղբյուրներն են։

Կաթներակները ու կաթնաղբյուրները պետք է լավ ճանաչել և հասկանալ։ Դրանք կովերի կաթնառատության շատ կարևոր նշաններ են։ Կաթներակները ծծից գնում են դեպի փորի յերկու կողմը։

Կաթնառատ կովերի կաթներակները հաստ, պարզ յերևացող թելերի պես են լինում։ Այդ իսկ կաթներակները ծծից մի քիչ հեռու փորի ներսն են մտնում։ Յեվ հենց այդ յերակների մտնելու տեղը ընդունված է կաթնաղբյուրներ անվանել։ Մատով եվ դժվար չէ նրանց շոշափել։ Բանից դուրս է գալիս, որ ինչքան այդ յերակները հաստ են, պարզ որոշված և ինչքան լայն

է կաթնաղբյուրների բերանը, այնքան եվ անսխալ կարելի յե ասել, որ կովը իսկապես կաթնառատ է։

Այդպիսի յերակները, ինչպես արդեն ասված է, կաթնառատ կովերի ծծերի վրա յեն լինում։ Սակայն այս կաթներակները ավելի քիչ են զարգացած, քան այն յերակները, որոնք փորի և կաթնաղբյուրների վրա յեն գնում։



Նկ. 3

Ծծի կաթներակները շատ վեռվեռ (ալիք-ալիք) են և ընդմիջվող ճյուղերով են միանում միմյանց հետ (Նկար 3. ա յեվ բ կաթներակներն են, в — կաթնաղբյուրները)։

ԿԱԹՆԱՌԱՏ ԿՈՎԻ ՈՒՐԻՇ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կաթնառատ կովի գլուխը թեթև պետք է լինի, մի քիչ եվ դուրս քաշած։

Վոտները բարակ պիտի լինեն, իսկ ականջները յերկայն և թափանցիկ։ Ականջների միջի մազերը—փափուկ։

Վիզը բարակ պիտի լինի, բավական յերկայնծռելու ժամանակ բազմաթիվ փոթեր ունի։

Մոռողը (վզի տակ կախված մասը)—միջակ մեծության։ Մեծ մռուզ միայն այն կովերն են ունենում, որոնք պարարտանալու հակումն ունեն։

Կաթնառատ կովի համար առանձնապես մեծ նշանակություն ունի կուրծքը։ Կենդանու մարմնի ամենակարևոր գործարանները՝ թոքերն ու սիրտը կրծքի մասումն են գտնվում, և ի հարկե որքան լավ է զարգացած կրծքի վանդակը, այնքան շատ հույս կա, որ կենդանու թոքերը և սիրտը առողջ են լինելու։

Կանոնավոր կերպով զարգացածը համարվում է լայն կուրծքը։ Այդպիսի կրծքի վանդակն էլ լայն և մեծեռդիր է լինում, և առջևի վոտները լայն են դրված։

Կաթնառատ կովի կողերը բարակ և տափակ պիտի լինեն։ Այդ կողերի միջի արանքները լայն են, մանավանդ վերջին կողերի միջև։ Այդ արանքներում յերկու - յերեք մատ պիտի տեղավորվի։

Փորը բավական մեծ պետք է լինի։ Դա ցույց կտա, որ կովը ընդունակ է մեծ քանակությամբ կեր մարսելու։ Բայց չէ որ առանց դրան շատ կաթ ստանալ չի կարելի։

Սակայն պետք է իմանալ զանազանել ամեն մի այդպիսի մեծ փորը «կախ ընկած» փորից, որ

կովի թուլությունը կամ նրա պառավությունն է ցույց տալիս։

Պատահում են նիհար փորով կովեր։ Առանց անասնաբուժի խորհուրդի, այդպիսի կովեր ձեռք բերել հարկավոր չէ։

Կաթնառատ կովի մեջքը ուղիղ և հավասար պիտի լինի։ Միայն հղի կովերինն է փոքր և ներս ընկած լինում։ Պառավ և շատ անգամ ծնածներից գրեթե ամեն մեկինը այդպես ներս ընկած է լինում։

Կաթնառատ կովերի վոտները բարակ և կարճ են լինում։ Վոտների բարձրությունը թերևս նշանակություն չունի։ Բայց ի նկատի պետք է ունենալ, որ կաթնառատ ցեղերի մեծամասնության վոտները բավական կարճ են լինում։ Յերբ ծիծը մեծ և լավ զարգացած է լինում, կովերը վոտները լայն են դնում։

Կաթնառատ կովի կաշին բարակ, շարժուն պիտի լինի, բուրդը կակուղ և քնքուշ։ Մատնելով բռնելիս այդպիսի կաշին շատ հեշտ է ձգվում և բարակ ծալք չինում։

Գույնը լավ է, յերբ նրա արմատը բարակ է։

Այդ էլ կարծես կովի կաթնառատության նշան կարող է համարվել։

Կաթնառատ կովի ամբողջ խառնակը բավականաչափ լավ զարգացած պիտի լինի։ Յեթե

56159.66
ЗАКАВ ԳՐԱԴԱՐԱՆ Г.С. Библиотека ZUUR-Арм.ССР Ա. ԻՄ. Ա. Մասիսյանի անվան
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

այդպիսի կովին մի կողմից նայելու լինենք, հեշտ է նկատել, որ նրա քամակը ավելի սաստիկ է զարգացած, քան թե առջևը։ Ցեվ այդ հասկանալի է։ Կովի յետին մասումն են գտնըվում նրա հղության և կաթնատվության (ծիծ) գործարանները։

Կաթնառատ կովի ընդհանուր տեսքը (մոտավորապես) այսպես պիտի լինի. թեթև, բարակ և պարզ արտահայտված վոսկորներ, լայն քամակ, յերկայն յերանք. բարակ, քնքուշ և շարժուն կաշի, որ պարանոցի վրա մանր ծալքեր է կազմում. ծծի, փորի, ականջների և վոտների ցածը մասերի կաշին ներսից կակուղ և քնքուշ մազերով պիտի լինի ծածկված։

Առհասարակ կաթնառատ կովը լավ կազմված պիտի ունենա, լավ և կայտառ տեսք պիտի ունենա. յերբ տերը կանչում է՝ հեշտ արձագանք պիտի տա, հանգիստ իրեն մոտ պիտի թողնի նայելու և կթելու։

ԾԾԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այժմ տեսնենք, թե կաթնառատ կով ընտրելիս ո՞րպիսի հիվանդությունների վրա պետք է առանձին ուշադրություն դարձնել։

1. Ծծի տուբերկուլյոզ (բարակացավ)։ Կաթնառատ կովերի բոլոր հիվանդություններից դա ամենից վտանգավորն է։ Դա վտանգավոր է այն պատճառով, որ տուբերկուլյոզը կարող է վարակել և մյուս կովերին։ Կաթի միջոցով ինքը մարդն էլ կարող է վարակվել։ Յերբ ծիծը տուբերկուլյոզ ունի, յերբեմն կարելի է պինդ և բոլորովին ցավ չպատճառող կնճռոտ ուռուցքներ շոշափել։ Պատահում է, որ ծծի վնասված մասը ամենից հաճախ յետին մասը, փոքրանում է։ Յերբեմն ուռուցքն ինքն իրեն մեծանում է և ահագին մեծության հասնում (մինչև 50 ֆունտ)։

Առհասարակ կովի ծիծը նայելիս յեթե ուռուցք պատահի, առանց անսանաբուժի նայելուն և նրա խորհրդին պետք չէ այդպիսի կով գնել։

2. Պտուկի անցքի նեղանալը։ Ծիծը դիտելիս կարելի է նկատել և պտուկի անցքի նեղություն։ Լինում են դեպքեր, յերբ պտուկի անցքը բոլորովին փակվում է։ Այդպիսի պտուկը ձեռք տալիս կարելի է անցքի մեջ սիսեռաձև պինդ ուռուցքներ շոշափել։ Այդ ուռուցքը կարող է կամ բոլորովին պտուկը փակել և չթողնել որ կաթը թափվի, կամ թե կարող է միայն դժվարացնել հոսանքը։ Այդպիսի հիվանդություն ունեցող կովը լավ է չգնել։

3. Գորտնուկներ (կոծիծներ) յեվ ճեղքեր։ Հաճախ են պատահում կաթնառատ կովեր, որոնց

պտուկների վրա գորտնուկներ են լինում։ Այդ գորտնուկները ավելի շատ փչացնում են ծծի տեսքը։ Բայց յեթե դրանք շատ են և մեծ, կթելու ժամանակ կխանգարեն։ Բացի դրանից, նույնիսկ կթողի ձեռներից այդ գորտնուկները կարող են մյուս կովերին անցնել։ Այդ պատճառով մեծ զգուշությամբ պետք է այդպիսի կով առնել։

4. Պտուկների թերեվ ճեղքերը։ Այդ ճեղքերը ամենից հաճախ առաջ են գալիս կեղտոտ պահելուց և ծիծը կթելուց առաջ և հետո լավ չխնամելուց, չհետևելուց։ Այդ վո՛չ-խոր ճեղքերը շատ հեշտ կարելի յե բժշկել։ Ուստի և այդպիսի կովը չի կարելի անպետք համարել։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐ. ԳԱՐՄԻՆ
ГСС Библиотека
ՀԱՍՈ-ԱՆԱ ՏՐՊ

ՀՀ Ազգային գրադարան
NL0293966

281

22830

ԳԻՆԸ 12 ԿՈՊ.

Симорохов

Как выбрать молочную корову.

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза С С Р

Москва Никольская 10.